# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 12.08.2014թ. թիվ 294-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության կարգի (**այսուհետ՝ Կարգ**) 2.1 և 2.2 կետերի պահանջներով,

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝**

1. ***Ստեղծել Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ երկու տարի ժամկետով.***
2. ***Հանձնաժողովի անդամներ նշանակել՝***
   - ***փաստաբան Կարեն Մեժլումյանին (արտոնագիր N 110),***
   - ***փաստաբան Գեղամ Հակոբյանին (արտոնագիր N 794):***
3. ***Փաստաբան Կարեն Մեժլումյանին նշանակել Հանձնաժողովի համակարգող:***
4. ***Հանձնաժողովի մյուս երեք անդամներին նշանակել Կարգի 3.1 կետում նշված ժամկետում:***
5. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Հանձնաժողովի նորանշանակ անդամներին, ինչպես նաև փաստաբաններին (համապատասխան տեղեկությունը կայքում տեղադրելու միջոցով):***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

**12 օգոստոսի 2014թ.**
**թիվ 295-Ա**
**ք. Երևան**